# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

## ՀՐԱՄԱՆ № 28

«28» 04 2022 թ. ք. Երևան

### ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գեղարքունիքի մարզի դատախազ Ռաֆայել Բագրատի Երիցյանին Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազի պաշտոնում նշանակելու և Էդուարդ Քաջիկի Հարությունյանին նույն մարզի դատախազի պաշտոնում նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի համապատասխանաբար՝ 18.04.2022թ. N 101-Ա և N 102-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է նրանց միջև կատարել վարույթների, փաստաթղթերի, գույքի, կնիքների ու դրոշմակնիքների հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

**Հ ր ա մ ա յ ո ւ մ  ե մ՝**

1. Կատարել Ռ.Երիցյանի կողմից՝ Գեղարքունիքի մարզի դատախազության վարույթների, փաստաթղթերի, գույքի, կնիքների ու դրոշմակնիքների հանձնում, իսկ Է.Հարությունյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

***Հանձնախմբի ղեկավար՝***

Ասլանյան Հայկ - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ

***Հանձնախմբի անդամներ՝***

Լազարյան Վարդան - Գեղարքունիքի մարզի դատախազի տեղակալ

Մարտիրոսյան Հայկ - Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ

Նազարեթյան Արմինե - Հայաստանի Հանրապետության դատախազության արխիվի բաժնի պետ

Քոչարյան Նարինե - Հայաստանի Հանրապետության դատախազության ընդհանուր բաժնի պետ

Բաղդասարյան Լևոն - Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի պետ

Բադասյան Շուշան - Գեղարքունիքի մարզի դատախազության տարածքային բաժնի պետ:

3. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2022 թվականի մայիսի 20-ը:

**Ա.ԴԱՎԹՅԱՆ**